

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂՈՒԲԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲՈՒ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 Ներկայ 1898 թվականի
 Պուշկարիոյ համար սարեկան 12 գրանի
 » » վեցամսեայ 6 »
 Արտասահմանի » սարեկան 14 »
 » » վեցամսեայ 7 »
 ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռյայն դրկի հետեւեայ հասցեով
 ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐՆԱ)
 Редакция на вѣстникъ
 „Иривункъ“
 ВАРНА (България).

Rédaction du journal
 „Irivounek“
 VARNA (Bulgarie)

Խրագրութեան ուղղեայ գրութիւնի
 եւ չեն դրկուիր եւ յարմար դասուած
 ներք միայն կը հրատարակուին անբող
 ջովիկ կամ սուսաւր:
 Կանոնական տողը 20 սանթիմ. երե
 փեկ սանթիմ. անգամներու համար 20 0/0
 գեղջ կը լինի, փոխարեւեր կանխիկ:

ԳԵՐՄԱՆ ԿԱՅՄԱՐԸ Ի Կ. ՊՕԼԻՍ

Մեր վերջին թիւի մէջ ամենա
 կարեւոր լուր մը հրատարակեցինք
 զոր մեր մէջ թղթակիցը փութա
 ցեր էր հաղորդել մեզի, որուն
 համեմատ Գերմանիոյ կայսրը փա
 փաք յայտներ է Ս. Օրմանեանի
 հետ տեսակցելու Կ. Պօլսոյ մէջ:
 Առաջին վայրկեանին լուրը անհա
 ւատալի կերեւայ: Սուլթանի մը
 տերիմը, թուրքիոյ, աւելի ճիշդ
 թուրքերուն հզօրագոյն բարեկա
 մը ինչպէս կարելի է որ յատուկ
 տեսակցութիւն մը ունենայ ուղե
 հայկական ինկորթոյ վրայ, Հայոց
 Պատրիարքին հետ և այսպէս
 պաշտօնապէս Պատրիարքին տոյ
 քաղաքական տեսակցեամբ, նշանա
 կութիւն մը որ, ըսել հարկ չէ,
 Սուլթանին կամքին և տեսու
 թեանց բացարձակապէս հակառակ
 միայն կրնայ ըլլալ: Յանձին Պատ
 րիարքին կայսրը արտակարգ պա
 տիւ մը ալ ընծայած պիտի ըլլար
 նաեւ հայ ազգին, թուրք կառա
 վարութեան և թուրք ժողովրդէն
 ամենէն աւելի ատուած, ամին օր
 նախատուած ու հաւստուած քը
 ըրստոնեայ տարրին: Ոչ, վիճելով
 Բ. չի կրնար Համիտ Բ. ի այնքան
 անհաճոյ քայլ մը առնել ոչ իսկ
 այդպիսի գաղափար մը յղացած ըլ
 լալ: Այդ անհնարին է անշուշտ, եթէ
 ենթադրենք թէ լոկ մեր սեւ աչ
 քերուն համար, կամ, մարդասի
 րական նկատումներէ մղուած՝ գեր
 վան կայսրը որոշած է մեզ այդ
 քան բարեացակամութիւն ցոյց
 տալ: Բայց կարելի չէ՞ արդեօք
 ենթադրել որ թերեւս գերմանա
 կան արեւելեան քաղաքականու
 թեան հաշիւներն իսկ պահանջեն
 Գերմանիոյ կայսրէն համակիր և
 հովանաւորող գիրք մը բռնել Հա
 յերուս հանդէպ:

Եթէ այս ենթադրութիւնը կա
 ընդի է, կարելի է նաեւ որ Գեր
 մանիա, հակառակ իր ցարդ բռն
 նած ընթացքին, Հայոց բարեկա
 մի գերը խաղալ ստանանք և այս
 ոչ թէ հակառակ Սուլթանի, այլ
 նոյն իսկ վերջինին համաձու
 թեամբը:
 Գերմանիա յայտնի է որ աչքը

տնկած է փոքր Ասիոյ վրայ, զոր
 իրաւամբ յարմարագոյն գողթա
 վայրը կը նկատէ իր հպատակնե
 րուն համար, որոնք թուրքիոյ
 մէջ բնաւ մայր-Հայրենիքի հետ
 իրենց կապը կորսնցնելու վտան
 գին մէջ չեն: Այսպիսի ծրագրով
 մը զբաղող կառավարութեան մը
 բնաւ անբանաւոր չէ վերագրել
 սիրաշահող քաղաքականութիւն մը
 Հայոց նկատմամբ որոնք երկրին
 մէջ ոչ քանակի և ոչ որակի կողմէ
 արհամարհելի տարր մը են:

Գերմանիա տնտեսական աշխար
 հակալութիւն ծրագրած է այդ
 երկրին մէջ և ատով իսկ ասոյեան
 մը պիտի հանդիսանայ անվրէպ
 Ռուսիոյ քաղաքական ձգտումնե
 րուն ասիական թուրքիոյ մասին:

Ռուսիա և Գերմանիա իրարու
 դէմ հոն մրցակից տեսնել: Ինչ
 բան կրնայ աւելի յարմարիլ Սուլ
 թան Համիտի հաշիւներուն որուն
 մասնագիտութիւնն է — եթէ այս
 բացատրութիւնը ներկի է — ճար
 տարօրէն օգտուել եւրոպական տե
 րութեանց միջիւ տիրող անհամա
 ձայնութիւններէն:

Թուրքիա բնականաբար ուսու և
 գերման պայքարին մէջ պիտի յա
 ըրի Գերմանիոյ, նախընտրելով զըտ
 նուիլ տնտեսական ծրագիրներու
 գործադրութեան հետամուտ մեծ
 տերութեան մը ազդեցութեաններ
 քեւ քան Ռուսիոյ կողմէն սպառ
 նացող վտանգներուն ենթակայ ըլ
 լալ:

Ու Գերման և թուրք այս տե
 սակ համաձայնութիւն մը կրնայ
 հզօր նեցուկ մը վնասուել հայ ժո
 ղովորդին, երկրին արտագրող,
 մտացի, զարգացման ընդունակ
 այս միակ տարրին համակիր և
 համբաշխ աշխատութեան մէջ,
 թէպէտ ստիպուած ենք անմիջա
 պէս յարելու թէ կացութեան պա
 հանջներուն այսքան արմատական
 ըմբռնում և այսքան իմաստուն
 հեռատեսութիւն ակնկալելի չեն
 թուրք կառավարութեան, իր ցարդ
 բռնած ձախող և անհետաքստ ըն
 թացքէն դատելով:

Թէ այս ամեն կենթադրութեանց
 մէջ որքան իրականութիւն կայ,
 շատ մօտ ժամանակի մէջ երեւան

պիտի գայ, երբ վիճելով կայսրը
 գայ ողջունել վստարի գեղեցիկ
 ափունքը:

Գուցէ դէպքերը գան նաեւ հաս
 տատել թէ վիճելով Բ. ի գիտումն
 է Երուսաղէմի Ս. Տեղեաց վրայ
 Հայոց ունեցած իրաւունքներէն
 օգտուել ինչպստ բողոքականու
 թեան:

Իցիւ թէ Ս. Օրմանեան այս
 պարագային մէջ կարենար հար
 կաւոր աշարժութեամբ վարուիլ ու
 ձեռքէ չհանել ու է ազգ. իրա
 ւունք Երուսաղէմի մասին, գոնէ
 առանց իրական մշտառեւ և գո
 հացուցիչ փոխարինութեան:

ՀԱՅՐ ԱՐՏԱՍՍՀՄԱՆԻ ՄԷՋ

Մեր վերջին թիւերէն միոյն մէջ
 նախադրուածով մը հայ կղերին
 թերութիւնները ձողկելու և ա
 նոնց բարոյական մակարդակը
 բարձրացնելու համար հրապարա
 կային ըննադատութիւններ և յան
 դիմանութիւններ ընելու պէտքը
 կը բացատրուէր: Հանդէպ կղերին
 հրապարակագրի մը պաշտօնին բե
 րումը այդ կերպով ամենայն իրա
 ւամբ արտայայտուած ասին, մա
 մուլին՝ հանդէպ ժողովրդեան ալ
 միեւնոյն պարտքը և միեւնոյն ի
 բաւունքները ունենալը բնաւ բա
 ցատրելու պէտք չի մնար: մանա
 ւանդ արտասահմանի մէջ, ինչպէս
 ի Պուլկարիա, ուր հայ տարրը բը
 նակչաց փոքրամասնութիւն մը կը
 կազմէ շրջապատուած օտար հոծ
 ազգերէ, որք մեծաւ մասամբ հայ
 ժողովրդեան նկարագիրը, ընդու
 նակութիւնը և բարոյական ուժը
 գրեթէ չեն ճանչնար, այլ իրենց
 մօտ գտնուած փոքրաթիւ հայե
 րուն վրայ կը ձեւեն ամբողջ հայ
 ազգին նկատմամբ կազմելիք գա
 ղափարին:

Ուստի արտասահման գտնուող
 հայ մը իր բնակած թաղին կամ
 գիւղին ու քաղաքին մէջ գրեթէ
 ամբողջ հայութեան պատկերը կամ
 կաղապարը կը ներկայացնէ, որուն
 վրայ իր շուրջ գտնուող օտար հա
 սարակութիւնը պիտի կազմէ գա
 ղափարը հանուր հայութեան նկատ

մամբ: հետեւաբար այդ մէկ կամ
 մէկ քանի հայուն իր ապրած մի
 ջովայրին մէջ ցոյց տուած ուղ
 զամտութեան, վարքի ու բարոյա
 կանի աստիճանը ստէպ կը վերա
 գրուի հայ անուան ու ազգութեան:

Արտասահմանի մէջ եթէ հայ
 անհատը ստախօտութիւն ըրաւ,
 Հայը ստեղ կ'ըսուի, եթէ խար
 դախութիւն գործեց, Հայը խար
 դախ է, եթէ գողցաւ, Հայը գող
 է: վերջապէս միշտ Հայ անունով
 կը մկրտուին ամեն արարք հասա
 րակ ժողովրդեան կողմէ, և Հայ
 անունն է որ կը սուսթէ: Ահա այս
 պատճառաւ մամուլը արտասահ
 մանի մէջ մեր փոքրաթիւ ազգա
 կիցներու բարոյական մակարդակը
 բարձր բռնելու համար հայ ան
 հատին մուլութիւնները ձողկելու
 և պանի հրապարակաւ նշաւակելու
 աւելի պարտք և իրաւունք ունի:

Անցեալ օր վստահելի անձ մը
 կը պատմէր Միսաք անուն գաղ
 թական հիւսնի մը ծայրայեղ խար
 դախութիւններն ու գողութիւն
 ները, զոր ի գործ դրած է իրեն
 յանձնուած չէնքի մը կառուցման ա
 տեն: հայ կտաւափածու մը պուլկար
 կնոջ մը հետ սակարկած կտաւը
 ճարպիկօրէն փոխելով, ստորին
 ազրանք մը քշած լինելը զգու
 նօք կը պատմէր նոյն կնոջ այրը
 և կ'ըսէր էրմէնի տօջապը ետքը:
 անցեալ օր ակնաստես եղանք եր
 կու հայու հրապարակի վրայ ըրած
 կուրիս: Աստուած իմ, ինչ ան
 պատկառ հայհոյութիւններ կը
 տեղացնէին իրարու զխու, և թը
 քերէն բառերով, որպէսզի օտար
 ներն ալ հասկնան և ըսեն թէ հայ
 հոյելու մէջ ալ հայերը ո՛րչափ
 յաջողակ են: փակաղծի մէջ — ցաւ
 ի սիրտ կ'ըսենք թէ մեր հրապա
 րակագիրներէն ոմանք ալ այս
 մասին շատ վար չեն մնար — և
 դեռ մի քանի շաբաթ առաջ հայ
 վարժապետի մը անբարոյականու
 թեանը պատճառաւ, Պուլկարիոյ
 հայաբնակ քաղաքներէն մէկէն ու
 տիկանութեան միջոցաւ հրապա
 րակային արտաբռումը և ուրիշի
 մը քանիցս գատարանաց առջեւ
 ամբաստանուելը: Ինչ տխուր
 պատկերներ:

